

ԱՐԱԶ ՏԱՐԵԳԻՐՔ, Ա. ՏԱՐԻ. 1933, ՊՈՒԲՐԵՇ

«Տարեգիրք»ի գրականութիւնը, որ դեռ մի քանի տարի առաջ այնքան ծաղկած էր մեր մէջ, վերջերս բաւական թուլացել է. իրար յետեւից անհետացան Թէոդիկի, Յ. Խաչմանեանի, Յունահայ եւ այլ տարեգրքերը: Հրապարակի վրա, իրբեւ նկատելի գործ, մնացել էր, կարելի է ասել, միայն Պարսամեան Եղբայրների «Կեանք եւ Սրւեստ»ը: Այս տարւանից նրան միացաւ եւ Բուքրէշի «Արագ»ը:

«Արագ»ը բոլորին առանձնայատուկ տեղ է գրաւում մեր տարեգրքերի շարքում. նա ամբողջապէս նիրւած է մէկ երկրի՝ Ռումանիայի հայ գաղութին, եւ սրա մէջ է նրա մասնաւոր արժէքը: Մի շարք ուսումնասիրութիւններով, լուրերով եւ տարեկան տեսութիւններով շօշափւած են ուսումնահայ կեանքի այլազան կողմէրը: Այդ նիւթի խտացումից պարզուամ է ուսումնահայ դաղութի անցեալ եւ ներկայ դէմքը: Պարզուամ է եւ մի ուրիշ հանդամանք. «Շատ քիչ ժողովուրդներ այնքան գուրզուրանքով իրենց գիրկն են բացած մեզ որքան Ռումէնը», գրում է տարեգրքերի խմբագիր Յ. Ճ. Սիրունին: Եւ, յիրաւի, Ռումանիայում հայը գգում է իրեն իր տանը: Նա շատ բան է ստանում Ռումանիայից եւ իր հերթին շատ բան էլ տալիս է: «Այսօրւան բովանդակ Մեռ Ռումանիան ծծած է մեր քրտինքը. Մոլտովան ու Պուլովինան ու Թրանսիլվանիան, եւ նաեւ Մունթէնիան ու Տոպլուձան կը կրեն մեր տքնութեանց հետքերը»:

Մեզ համար առանձնապէս հետաքրքրական է տարեգրքի «Սեբմեր Օտար Հոդի վրա» բաժինը, ուր ներկայացւած են մի շարք հայեր, որոնք մեծ դեր են կատարել կամ այսօր էլ կատարում են համառումանական կեանքում: Առաջինը դրանց մէջ Գրիգոր Պըյըգիթան է՝ ծնւած 1840թ. եաշում, մեռած 1912թ.: Յայտնի փաստաբան ու պետական գործիչ, որ 1888թ. ընտրեց խորհրդարանի երեսփոխան, 1892ին՝ ծերակուտական եւ 1894ին՝ անդամ երկրի բարձրագոյն դատական մարմնի՝ վճռաբեկ ատեանի: Այս վերջին պաշտօնը նա վարեց 14 տարի եւ թանկագին ծառայութիւններ մատուցեց ուսմէն օրէնսդրութեան: Միաժամանակ Պըյըգիթան քաջ հայագէտ էր եւ զրադւում էր հայ բանասիրութեամբ: Նրա ջանքերով էր, որ Պետերուրդում հրատարակւեց Մինաս դպիր Թոփաթեցիի պատմական քերթւածը մոլտավահայոց չարչարանքների մասին Սթէֆան Վոտա իշխանի

ձեռքով 1551ին։ Պլյազլիում ոռումաներէն էլ թարգմանեց ու հրատարակեց այդ ողբը։ Նաեւ մեծ ջանք թափեց ապացուցանելու հայերի գերը ոռումանական հոչակաւոր Սրճէշ վանքի կառուցման գործում։ Տարեգրքի մէջ տրւած է եւ Պլյազլուի յառաջարանը Մինաս դպիր Թոփսաթեցիի ոռումաներէն հրատարակութեան — չերմ ոգիով եւ առողջ հայրենասիրութեամբ գրւած մի ուսումնասիրութիւն, որ պատիւ է բերում հեղինակին։

Յաջորդ «սերմը օտար հողի վրա» կարապետ Խպրայիլեանուն է, որ «մեծ քննադատու»ի համբաւ է վայելում ոռումէն գրականութեան մէջ։ Ծնւել է 1871թ. Մոլտովալի Թէքուչ նահանգում։ 1906ից աշխատակից ու զեկավար է «Վիայա Խոմընէասքը» կարեւորագոյն գրական ամսագրի։ 1912ից մինչեւ այժմ վարում է Եաշի համալսարանի նորագոյն գրականութեան դասախոսի պաշտօնը։ Ունի մի շարք գրական-քննադատական հատորներ՝ «Քննադատական Ոգին» (1908), «Դէմքեր ու Հոսանքներ» (1909), «Նշմարներ ու Տպաւորութիւններ» (1920), «Խումէն եւ Օտար Գրադէտներ» (1926), «Գրական Ուսումնասիրութիւններ» (1930), «Կեանքը Դիտելէն» (1930)։

Հայ «սերմ» է եւ ոռումէն միակ փիլիսոփան՝ Վասիլէ Քոնքան (1845—1882), որ միաժամանակ եղել է եւ խոշոր պետական գործիչ — Խորհրդարանի անդամ, նախարար։ Իբրև վիլիսոփա, Քոնքան գտնւել է Օգիսոտ Կոնտի, Սպենսէրի, Բիւխների եւ, առհասարակ, գրական-նիւթեապաշտ փիլիսոփայութեան ազգեցութեան տակ, սակայն, աշխատել է ստեղծել ինքնուրոյն փիլիսոփայական ուսմունք։ Իր ակեղերական ալիքների դրութեան մէջ Քոնքան փորձում է համադրել տիեզերական երեսոյթները՝ հաստատելով բարձրացման եւ անկիման շարժումների գոյութիւնը։ Ունի գիտական-վիլիսոփայական եւ՝ քաղաքական-իրաւաբանական հատորներ, որոնց մէջ ամենակարեւորներն են «Տիեզերական թրթուցման տեսութիւնը», «Տեսակների ծագումը», «Բնագանցութեան հիմքերը» եւ այլն։

Որոշ վերապահութեամբ, հայածին ոռումէնների շարքն է դասում եւ Խումնիայի մեծ բանաստեղծ Միհայիլ Էմինէսկուն (1850—1889)։ Խումնացիներն իրենք, ինչպէս Եորդան, պնդում են, որ Էմինէսկուն ծագումով ոռումէն էր։ Սիրունին փորձում է ապացուցանել Էմինէսկուի հայկական ծագումը։ Տարեգրքում առաջ են բերւած Էմինէսկուից 15 կտար քերթւածներ՝ Յ. Ճ. Ա. Միհայիլի թարգմանութեամբ։

«Հայ սերմ» է եւ համեմատաբար լայն հայ շրջաններին ծանօթ Գրիգոր Թրանենու նաշը (ծն. 1873թ.) — փաստաբան, ուսուցչապետ, լրագրող, քաղաքական ու պետական դործիչ, խորհրդաբանի երեսփոխան, նախարար։ Եւ նաեւ գործօն անդամ ուռումանահայ գաղութի, որ մեծապէս նպաստեց Թումանիայի հայ թեմի կազմակերպութեան գործին։

Վերջապէս, տարեգրքի վերջին «Հայ սերմը»՝ Խոն Փէքը իսպու (1851—1932) — ոռումէն թեմի մեծագոյն դերասաններից մէկը, «ոռումէն թատրոնի իշխանը», թատերագիր Պառւլ Պրոլայի բնորոշմամբ՝ «Բուքքէշի աղջային թատրոնի սիւներից մէկը»։

Մասնաւոր հետաքրքրութիւն է ներկայացնում եւ «Արագ»ի «Հայ կետքերը Խումէն երկրի մէջ», ուր ներկայացւած են Նիքոլա Եռոկա, Պոկտան Հաժդիկու և Կէորիկ հայոց պատմութեամբ և մշակոյթով զրադւող ոռումէն գլխանականները և իրենց գործերը։ Առաջ է բերւած նաեւ Համբէկուի մէկ յօդւածը Արճէշի վանքի մասին։ Հետաքրքրական է եւ «Հայ արւեստի պրատիչ» կ. Պալշի «Հայ եւ վրացական աղղեցութիւններ ոռումէն ճարտարապետութեան վրա» պատկերազարդ ընդարձակ ուսումնասիրութիւնը, որ գետեղւած է տարեգրքում։

Այնուհետեւ «Խումանահայ քրոնիկոն» բաժնում առաջ է բերւած ոռումանահայ անցեալի ժամանակագրութիւնը 897—1600 թւականը, ուր ոռումանահայ գաղութի պատմութեան վերաբերող կարեւոր տեղեկութիւններ են հաւաքւած։

Տարեգրքի մասց մասը — 173—272 էջ — նւիրւած է ընդհանուր եւ ոռումանահայ կեանքի առօրեային — մանրամասն պատմութիւնը, թէ ինչպէս հիմնեցաւ ոռումանահայ թեմը, առաջ են բերւած բոլոր պաշտօնական վաւերագրերը, հայ մշակոյթի տօնը, տարելարձներ, տարւայ մահեր, թեմն եւ իր համայնքները — մի խօսքով, ոռումանահայ կեանքը իր պէսպէս կողմերով։

Այսքանն ինքնին արդէն բաւական է ցոյց տալու համար, որ օդտակար եւ քաջալերանքի արժանի գործ է «Արագ»ի կատարածը։ Պէտք է մաղթել, որ նաեւ յաջորդ տարիներ «Արագ»ը ընթանայ նոյն ուղիով՝ աւելի եւ աւելի լայն ընդգկելով ոռումանահայ կեանքը։ Մասնաւորապէս փափաքելի է, որ ուշագրութիւն դարձել եւ ոռումանահայ գաղութի տնտեսական վիճակին։

Պէտք է մաղթել նոյնպէս, որ «Արագ»ի օրինակը վարակիչ դառնայ եւ մեւ միւս գաղութիւնների համար։ Այդ ձեւով կարելի կը լինի առաջ նիւթ համախմբել արտասահմանի հայութեան պատմութեան եւ մշակոյթի մասին։

Ս. Վ.